ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ПУБЛИКАЦИИ

ՍՈՖԻԱՅԻ ԿԻՐԻԼ ԵՎ ՄԵԹՈԴԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՕՍՄԱՆՅԱՆ ԴԻՎԱՆԱԿԱՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ

Ուշ միջնադարի սոցիալ-տնտեսական, հասարակական և քաղաքական կյանքի ուսումնասիրության համար առավել հավատի աղբյուրներ են հանդիսանում պետական-վարչական բարձր և ստորին դիվանատներում, կրոնական-եկեղեցական հաստատություններում և իշխող դասի անձնական դիվաններում պահպանված պատմական վավերագրերը։

Հայ ժողովրդի պատմության XV—XVIII դդ. գիտական համակողմանի հետազոտմանը մեծ չափով նպաստում են ինչպես իրանական, այնպես էլ օսմանյան արքայական հրովարտակներն ու շարիաթական-իրավական փաստաթղթերը։ Արևելագիտական շրջանակներին արդեն ծանոթ են այս բնագավառում Եռպատերազմյան տասնամյակներին կատարված բնագրագիտական աշխատանքների արդյունքները, որոնց շնորհիվ լայն շրջանառության մեջ դրվեցին բազմաթիվ արժեքավոր վավերագրերի գիտական հրապարակումներ՝ մեծ չափով նպաստելով նշված հարյուրամյակների քաղաքական և սոցիալ-տնտեսական պատմության կարևոր հարցերի լուսաբանմանը։

Այս առումով, մեզանում առավել արդյունավետ են եղել պարսկերեն բնագրերի հրապարակման ուղղությամբ կատարված աշխատանքները, և դա հիմնականում այն պատճառով, որ Արևելյան Հայաստանը իրանական տիրապետության տակ գտնվելու պատճառով էջմիածնի կաթողիկոսական դիվանում և Արևելյան Հայաստանի մյուս վանքերում պահպանված վավերագրերը պարսկերեն են, իսկ թուրքական վավերագրերը կա՛մ կաթողիկոսներին ու նրանց նվիրակներին տրված բերաթներ են և կա՛մ օսմանյան զորքերի կողմից Անդրկովկասի կարճատև նվաճումների շրջանին վերաբերող վավերագրեր, որոնք մեծ թիվ չեն կազմում[1]։

Պետք է ասել, սակայն, որ օսմանյան պատմական վավերագրերի գիտական հրապարակման ուղղությամբ և՛ թուրք մասնագետների, և՛ արևմտաեվրոպական թուրքագետների կողմից կատարված աշխատանքները ավելի մեծ ընդգրկում ունեն[2]։ Ուշադրության արժանի են նաև Վրաստանում կատարված հրապարակումները[3]։

Արևմտյան Հայաստանում ավելի քան 400-ամյա օսմանյան տիրապետության շրջանի դիվանական վավերագրերի, հատկապես հայկական համայնքներին վերաբերող փաստաթղթերի հա-

---

[1] *Տե՛ս Հ. Դ. Փափազյան. Մատենադարանի թուրքերեն վավերագրերի աղբյուրագիտական արժեքը.—«Պատմա-բանասիրական հանդես», 1974, № 4, էջ 89—98։ Նույնի՝ Վաղարշապատ կյուղի 1725 և 1728 թթ. թուրքական հարկացուցակները.—«Բանբեր Մատենադարանի», № 5, Երևան, 1960, էջ 431—464։ Հայերի դերը Թուրքիայի մետաքսագործության մեջ և 1729 թ. Թավրիզում կնքված համաձայնագիրը.—«Բանբեր Մատենադարանի», № 9, Երևան, 1969, էջ 241—253։*

[2] *Առավել կարևոր հրապարակումներից կարելի է հիշել.* O. L. Barkan, XV ve XVI-inci asırlarda Osmanli Imperatorlugunda zirai ekonominin hukuki ve maii esasları, I cild „Kanunlar" (*այսուհետև* O. L. Barkan, „Kanunlar"). Istanbul, 1943, Fahri Daisar. Türk sanayi ve ticaret Tarihinde Bursada ipekçilik. I stanbul, 1960, L. Fekete. Die siyaqat-schrift in der Tür kischen Finanzverwaltung. Budapest, 1955: Kechnunhsbücher Türkischer Finanzstellen in Buda (ofnn), Budapest, 1962, M. Guboglu. Paleografia si diplomatica Turco-osmana. Eucuresti, 1958; А. Траянов Велко Османотурски документы о финансово съдържание 16—18 вв., София, 1977.

[3] دفتر مفصل ولايت كورجستان، تور كجه متنى ترجمه و تدقيق و تحشيه ايدن س • جيكيا تيليسى، ١٩٤٧ ოსმალური დოკუმენტური წყაროები ანაკლიისა და რუხის ციხეების შესახებ (XVII—XVIII), გამოსაცემად მოამზადა ნოდარ შენგელიამ, თბილისი, 1982. ჩილდირის ეიალეთის ჯაბა დავთარი 1694—1732 წ.წ. გამოსაცემად მოამზადა ცისანა ბბულაძემ, თბილისი, 1979.